աջից՝ Ունուսխեւի առուն, որ ոռոգում է Վարտելիա, Խիլմոգրեան դեղերը. Մածալա-խեթի առուն՝ Բացա, Բջիա-բերդ եւ Սագա-բա առուն, որ ոռոգում է Սուազարա, Գոր-զոթախան, Խան դեղերը եւ սրանց եայլա-ները: Արդանուչի առուակը թափւում են ձախից Լոռի եայլաների ջրերը, որոնք իջ-նում են Զեգերիայից, Ուսոտից, Տանձոտից եւ Կապտախոռի ջուրը Սալաջուր լեռներից, Սախրէյի առուն, որ բղխում է Կոկեվա լեռ-ներից եւ այս երեք առուները միանալով՝ կազմում են Արաւետի առուակը, որն իջնում է Ճալայից դէպի հիւսիս, ընդունելով Կարջէտի, Կոնխայի, Սագարայի առու-ները, որոնք ոռոգում են Ուրթամասի, Օր-դիցի, Մներիստի, Ջամարզարգեղի, Տափ-ծերի ուրակները, բերդերը: Առաւետ առուի շուրջը տասի չափ ամրոցներ կան, որոն-ցից իւրաքանչիւր ջոկ-ջոկ անուններ ունի: Եթէ մանրամասն ամէն մի աւերակի, դղեա-կի, վանքի անունները գրի առնուին. մի քանի հատոր կարելի է լցնել: Այսպէս էլ Ճորոխի Աւազանի ամէն մի առուի շուրջը պատած է հին քաղաքակրթութեան բեկոր-ներով, որոնք դատապարտուած են խստառ անհետանալու: Թէ ի՞նչ մեծ քաղաքակրը-թութիւն, ի՞նչ խիտ բնակչութիւն է ունե-ցել, վկայում են այդ բոլոր աւերակները եւ նրանց կերտուածքը:

Արդանուչի բերդի Զեհէննէմ-Դերէ (դժոխքի ձոր) ցած իջնելով՝ Արդանուչը